ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

<< 08 >> փետրվարի 2019թ. N 183-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ֆինանսական վիճակագրության և ռիսկերի վարչության կանոնադրությունը համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ա.ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
«08» փետրվարի 2019թ.
N 183-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)) ֆինանսական վիճակագրության և ռիսկերի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշման համաձայն:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, այլ իրավական ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը (այսուհետ՝ Նախարար) հաստատում է Վարչության կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը, և կանոնադրության մեջ կատարում փոփոխություններ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Վարչության հիմնական խնդիրներն են՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախարարությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը՝ իր իրավասությունների շրջանակներում: Մասնավորապես՝

1) պետական կարիքների համար ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների ու աշխատանքների գների ուսումնասիրությունը և դրանց վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը և հրապարակումը.

2) Հայաստանի Հանրապետության տարածքում գների ուսումնասիրության և սահմանման հեռանկարային զարգացման ծրագրերի իրականացման նպատակով պետական քաղաքականության մշակման աշխատանքներին մասնակցությունը.

3) բյուջեների կազմման նպատակով շուկայական գների ուսումնասիրումը և կողմնորոշիչ գների հրապարակումը.

4) գնման պայմանագրերի գների վերլուծությունը, ռիսկերի վերհանումը և հրապարակումը (համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությամբ հաստատված գործառույթների).

5) պետական բյուջեի վրա ազդեցության տեսանկյունից ենթակառուցվածքային ոլորտում և հանրային ծառայությունների կարգավորման տիրույթում գործող, ինչպես նաև բյուջետային վարկեր (ենթավարկեր) և երաշխիքներ ստացող կազմակերպությունների (այսուհետ՝ Կազմակերպություններ) գծով ֆիսկալ ռիսկերի գնահատումը և հնարավոր բացասական ազդեցության նվազեցման/զսպման մեխանիզմների մշակումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչության գործառույթներն են՝

1) շինարարական նյութերի, կոնստրուկցիաների և պատրաստվածքների կողմնորոշիչ գների և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով այլ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գների ուսումնասիրումը, վերլուծությունը, դրանց վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով շինարարության ոլորտում գների ինդեքսների հաշվարկումը և հրապարակումը.

3) ուսումնասիրվող ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ցանկի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով առաջարկությունների ներկայացումը.

4) իրավաբանական անձանցից, անհատ ձեռնարկատերերից, գործադիր իշխանության մարմիններից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով, իր կանոնադրական խնդիրների կատարման համար անհրաժեշտ համապատասխան տեղեկատվության և տվյալների ստացումը.

5) սպառողական շուկայի ուսումնասիրությունների իրականացումը.

6) Հայաստանի Հանրապետության տարածքում գնագոյացման և հեռանկարային զարգացման ծրագրերի իրականացման նպատակով քաղաքականության մշակման աշխատանքներին մասնակցությունը.

7) Կազմակերպությունների գործունեությունից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման վերաբերյալ իրավական ակտերի մշակման և հաստատման ներկայացման աշխատանքների իրականացում.

8) Կազմակերպությունների գործունեությունից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման նպատակով պետական մարմիններից և այլ աղբյուրներից տեղեկատվության ստացումը և տվյալների շտեմարանի վարումը.

9) տվյալների շտեմարանի հիման վրա կատարված գնահատումների արդյունքում ֆիսկալ ռիսկերի բացահայտումը, դասակարգումը, յուրաքանչյուր ռիսկի նյութականացման հավանականության գնահատումը և հնարավոր ֆիսկալ ծախսերի հաշվարկումը.

10) բացահայտված ֆիսկալ ռիսկերի նյութականացման հավանականությունը կամ հնարավոր բացասական ազդեցության նվազեցման (զսպման) նպատակով մեխանիզմների մշակումը, ներկայացումը և բյուջետային փաստաթղթերում ներառման աշխատանքների համակարգումը.

11) Կազմակերպությունների ֆիսկալ ռիսկերի գնահատման հետ կապված միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության աշխատանքների համակարգումը.

12) Նախարարության համապատասխան բնագավառների քաղաքականություն մշակող ստորաբաժանումներին, ըստ անհրաժեշտության, Վարչությունում առկա տեղեկատվության տրամադրումը.

13) Վարչության գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակման գործընթացին մասնակցությունը.

14) Նախարարության կանոնադրությամբ հաստատված գործառույթների իրականացումը.

15) Նախարարի և Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) այլ հանձնարարականների կատարումը:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Վարչությունը ղեկավարում է վարչության պետը, նրա բացակայության դեպքում՝ Վարչության պետի տեղակալը, իսկ նրա բացակայության դեպքում գլխավոր մասնագետներից մեկը՝ Վարչության պետի հանձնարարությամբ:

7. Վարչության պետը անմիջական հաշվետու է Նախարարին:

8. Վարչության գործունեության համակարգումը Նախարարի հրամանով կարող է վերապահվել Նախարարի տեղակալներից մեկին:

9. Վարչության պետին հանձնարարականներ և ցուցումներ տալիս է Նախարարը: Նախարարի հանձնարարությամբ հանձնարարականները կարող են փոխանցել իրենց համակարգման լիազորությունների շրջանակներում Նախարարի տեղակալը, Գլխավոր քարտուղարը:

10. Վարչության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերն ստորագրում է Վարչության պետը:

11. Վարչության յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրվում և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքները ու կոմպետենցիաները և կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով (աշխատատեղի նկարագրով):